ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍՆԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
SPECIAL TOPIC: MOON WORSHIP

Դեռևս սկսած *Շումերից* (մեզ հայտնի ամենահին քաղաքակրթությունը) լուսնի պաշտամունքը եղել է Հնագույն Մերձավոր Արևելքի ամենամեծ տարածում գտած դիցաբանությունը: Այս առասպելն ուներ թե՛ արական և թե՛ իգական կերպար: Սկզբնապես լուսնի աստվածը ծնվել է ցորենի աստվածուհու՝ *Նինլիլից*, որին բռնաբարել էր *Էնլիլը*՝ երկնքի աստվածը: *Էնլիլը* վտարվում է պանթեոնից և իր արարքի համար դատապարտվում սանդարամետին, սակայն երբ *Նինլիլը* հայտնաբերում է, որ ինքը հղի է, միանում է նրան: Երեխային՝ *Սինին* (կամ *Զին*) թույլատրվեց, որ ամեն գիշեր բարձրանա երկինք:

Լուսնի երկրպագությունը տեղի է ունենում լուսնի տարբեր փուլերի ժամանակ՝

1. նորալուսին – *Asimbabbar*
2. կիսալուսին – *Sin*
3. լիալուսին – *Nanaa* (Շումերական «լուսավորությունը» *En-su*-ից՝ «իմաստության տիրոջից»)

Այս անունները հիմնականում նշանակում են «իմաստուն տեր» (այսինքն՝ *Suen*) կամ «լուսավորում» (*Nanaa*), որոնց երկրպագում էին Քաղդեացիների Ուր քաղաքում: Քաղաքն ինքնին հաճախ անվանում էին Նաննարի քաղաք: Պտղաբերության զույգին երկրպագում էին զիգուրատներում (հարթ գագաթներով հսկա բուրգեր), որոնք գտնվում էին քաղաքի մեջ: Արևի աստվածը (*Shamash*) զույգի առաջնեկն էր, իսկ հետո *Ereshkigal* (սանդարամետի Թագուհին) և *Nanna* աստվածուհին (երկնքի Թագուհին):

Այս պաշտամունքը տարածվել էր ամբողջ Հնագույն Մերձավոր Արևելքով (ՀՄԱ), սակայն երկրպագության կենտրոններ էին հանդիսանում հետևյալ քաղաքները՝

1. Ուր
2. Խառան
3. Թեմա
4. Քանան
5. Մեքքա

Իրականում այս դիցաբանությունը համադրում է պտղաբերությունը աստղերի պաշտամունքի հետ:

ՀԿ-ը մերժում է աստղերի (տես՝ 2 Օրինաց 4:19, 17:3, 4 Թագ. 21:3,5, 23:5, Երեմ. 8:2, 19:13, Սոփ.1:5) և պտղաբերության երկրպագությունը (այսինքն՝ Բահաղի և Աստարովթի, Ուգարտական պոեմներում): Եբրայեցիները՝ բնիկ քոչվորները, շատ զգույշ էին լուսնի երկրպագությանը դիմադրելու հարցում, քանի որ ընդհանրապես լուսնի պաշտամունքը հատկանշական էր քոչվոր ցեղերին, ովքեր ճամփորդում էին գիշերով, մինչ արևին ավելի շատ երկրպագում էին նստակյաց կյանքով ապրող կամ գյուղատնտեսությամբ զբաղվող ժողովուրդները: Ի վերջո քոչվոր ազգերը ունեցան իրենց հանգրվանները և ապա աստղերի պաշտամունքը հիմնականում դարձավ խնդիր: